



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

«03» 07 2018 թ.

No 06/3-3/44948-18

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ
ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ
ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ Վ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ

ՊԱՏՃԵՆԸ՝ ՀՀ ՊԵԿ ՓՈՔՐ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՀԱՐԿԱՅԻՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ ՊԱՐՈՆ Տ. ԶԱՔԱՐՅԱՆԻՆ

ՀՀ ՊԵԿ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՊԱՐՈՆ Վ. ՍԻՍԱԿՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 17.05.2018 թվականի
թիվ Պ-34 գրության

Հարգելի պարոն Համբարձումյան

Հիմք ընդունելով ՀՀ հարկային օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասը և 307-րդ հոդվածը, իրազեկման կարգով հայտնում ենք հետևյալը:

ՀՀ հարկային օրենսգրքի՝

- 1-ին հոդվածի՝ 1-ին մասին համապատասխան՝ հարկային օրենսգիրքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում կիրառվող հարկերի և օրենսգրքով նախատեսված վճարների հետ կապված հարաբերությունները (այսուհետ՝ հարկային հարաբերություններ), սահմանում է Հայաստանի Հանրապետության հարկային համակարգի սկզբունքները, հարկի և վճարի հասկացությունները, տեսակները, հարկ վճարողների շրջանակը, հարկի դրույքաչափերը, հարկի հաշվարկման, վճարման, իսկ օրենսգրքով սահմանված դեպքերում՝ հարկային պարտավորությունների գանձման կարգն ու ժամկետները, ինչպես նաև հարկային արտոնությունները,

- 2-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունում հարկային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապե-

տության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության վավերացված միջազգային պայմանագրերով, Օրենսգրքով, վճարների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենքներով, դրանց հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով ընդունված ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերով, ինչպես նաև նույն հոդվածի 3-րդ մասի 1-6-րդ կետերում նշված իրավական ակտերով (այսուհետ՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտեր),

- 386-րդ հոդվածով սահմանված է ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման գործարքների դիմաց կանխիկ դրամով վճարումների նկատմամբ կիրառվող սահմանափակումները:

Միաժամանակ, «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի՝ 1-ին հոդվածին համապատասխան՝ օրենքը կարգավորում է արժութային գործարքները, արժութային գործարքներ իրականացնող անձանց գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված կանխիկ դրամով վճարումների նկատմամբ օրենսգրքի 386-րդ հոդվածով սահմանված սահմանափակումները, ինչպես նաև «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՀ օրենքով արտարժույթով իրականացվող գործարքների (գնանշում, վճարում) մասով կիրառվող սահմանափակումները (մասնավորապես՝ օրենքի 6-րդ և 7-րդ հոդվածներ) վերաբերում են ՀՀ տարածքում իրականացվող գործարքներին, և այդ դրույթները կիրառելի չեն ՀՀ տարածքից դուրս իրականացվող կանխիկ վճարումների նկատմամբ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

 Восстановимая подпись

X



VERIFIED OCSP 8/6/2018 14:11:18 GMT+4

Подписано: MANUKYAN ARTUR 3801690067



Ա. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Կատ.' ՎՄԸՍՎ հարկերի և պարտադիր վճարների
մեթոդաբանության թիվ 2 բաժին, հեռ. 060-544-646